

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ տպագրվել է գիրք ուղղված էկոլոգիայի լուսաբանմանը

Երևան, 19 հունվարի 2006թ.—ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և բնապահպանական տեղեկատվական հասարակական «Օրիոս» կենտրոնի աջակցությամբ տպագրված գրքի նպատակն է ուսուցանել հանրությանը էկոլոգիայի կուլտուրան:

Պրոֆեսորներ Ոստանիկ Մարուխյանի և Արմեն Հովսեփյանի հեղինակած այս գիրքը առաջին անգամ հրատարակությունն է Հայաստանում: Այն վերլուծում է համաձայնողական էկոլոգիական խնդիրները և պարզաբանում նրանց լուծման կախվածությունը մարդու կուլտուրայից և համաշխարհային և ազգային ասպեկտներում նրա փոխազդեցությունից բնության հետ:

«Շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետությունը մեծապես կախված է բնակչության բնապահպանական կրթությունից և իրազեկումից,» ասում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Վլադիմիր Պոլյախինը: «Բնապահպանական գործոնները էլ ավելի աճող ազդեցություն ունեն բարեկեցության, կայունության և անվտանգության վրա:

ՀՀ Կրթության և գիտության փոխնախարար Արա Ավետիսյանը ավելացրեց, որ հրատարակությունը կարևոր ներդրում է Հայաստանում էկոլոգիայի մասին իրազեկման և քաղաքացիական հասարակության զարգացման համար:

Գիրքը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ և օգտակար կլինի նաև որոշում կայացողների և օրենսդիր մարմինների ներկայացուցիչների համար: Ձեռնարկը նաև դրական գնահատականի է արժանացել Վրաստանի էկոլոգիական գիտությունների ակադեմիայի կողմից, որը պատրաստվում է այն թարգմանել վրացերեն: